ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.5/33785-2025**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի (Կ-1136-13.08.2025-ՏՏԳՇ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

**«Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին՝**

**1.** Օրենքի նախագծի 14-րդ հոդվածը առաջարկում ենք հանել, ինչով պայմանավորված առաջարկում ենք օրենքի նախագծի՝

**1)** 13-րդ հոդվածում լրացնել նոր 3-րդ և 5-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«3) 1-ին մասի «ա», «բ» և «զ» կետերում «տեղադրման» բառից հետո լրացնել «կամ պահման» բառերը,

5) 1-ին մասի «բ» և «զ» կետում «շրջակա միջավայրում» բառերը փոխարինել «հատուկ հատկացված տեղերում» բառերով,»,

**2)** 15-րդ՝ (լրամշակված 14-րդ) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. Օրենքի 22-րդ հոդվածի.

1) վերնագրում «Շրջակա միջավայրում» բառերը փոխարինել «Հատուկ հատկացված տեղերում» բառերով, «տեղադրման» բառից հետո լրացնել «կամ պահման» բառերը, իսկ «վճարները» բառը փոխարինել «հարկերը» բառով,

2) 1-ին մասից առաջ լրացնել «1.» թվով,

3) 1-ին մասում «Շրջակա միջավայրում» բառերը փոխարինել «Հատուկ հատկացված տեղերում» բառերով, «տեղադրման» բառից հետո լրացնել «կամ պահման» բառերը, իսկ «սահմանվում են բնապահպանական վճարներ՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան» բառերը փոխարինել «բնապահպանական հարկերը սահմանված են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով» բառերով:»:

**2.** Նախագծի 16-րդ (լրամշակված 15-րդ) հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:

**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծում փոփոխություններ չեն կատարվել:**

Հարգանքով՝

**ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**